

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ

Համառուսական հրդէնական ցուցահանդէսը Պետերբուրգում Ռուսաց և իրավուղիների նոր տարիքը, Միջազգային երկաթուղարքին համաժողով Պետերբուրգում, Ռ. Ֆիրիմով Պետերբուրգում և նրա ճառերը, Քաղաքային ինքնավարութեան օրէնքի մէջ փոփոխութիւններ, նոր գրքեր ուսերէն լեզով,

Մայս 23-ին Պետերբուրգում բացւած համառուսական հրդէնական (պաշտոնական) ցուցահանդէսը մի տեսակ նորութիւն էր Ռուսաստանի համար, Յուցահանդէսը գլուխ է եկել չնորհիւ կալսերական Ռուս Տեխնիկական Ընկերութեան և նախաձեռնութիւնը պատկանում է կոմս Ա. Դ. Լովին։

Օտարեկրացիք անձագանք էին տւել արդ ցուցահանդիսին չը նալած որ իրանք մասնակից չէին մրցանակաբաշխութեան (hors concours, անհանդացուցանք)։

Ներքին գործերի մինիստրութիւնից լատինած տեղեկութիւններից երեսց, որ Ռուսաստանում հրդէնի դէպքեր եղել են 1860—տասը հազարից քիչ ամելի և որ 1889 թ. արդ թիւը հասել էր 53.000 դէպքին։

Հրդէնների դէպքերի ար թւից 91,6%/<sup>o</sup> ընկնում է գաւանների վրա և միմիայն 8,4%/<sup>o</sup> (այսինքն 4.352 դէպք) քաղաքներին է համարում։

Միջին հաշվով տարեկան վնասը բոլոր նահանգների համար ընդունում է մոտ 79 միլ. ռուբլի։

\* \* \*

Մայս ամսից սկսած Ռուսաստանի երկաթուղիների գնացքը արագացած է շնորհիւ ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութեան կարգադրութիւններին։ Այժմ պասաժիր գնացքը անում է մի ժամում մօտ 30 վերստ, փոստավինը 36 վերստ, իսկ արագը՝ 46 վերստ։

Թուզիսի 15-ից սկսած նաև Անդրկովկասում հրատարակեց ցուցակը

<sup>1)</sup> Մարտրուց—գնալի ճանապարհ, ճանապարհի ուղղութիւնը

Դրապառլու մարշրուտների<sup>1)</sup> թւով 113՝ սովորական գներից 40% էժանացրած:

Երջապառլու մարշրուտները նորութիւններ են Ռուսաստանի համար:

Երջապառլու մարշրուտի տոմսակը ունի 45 օրից 90 օր տեղութեան արձեք:

Թիֆլիսից Ռուսաստան գնալու և Թիֆլիս վերադառնալու համար կարելի է ընտրել 113 մարշրուտներից ամենալարմարը՝ նաև ած թէ ոլ ինչ քաղաքներ է կամենում ալցելել:

Թէ ալս և թէ փառագակ նորամուծութիւնները արւած են պ. Պերլի զեկուցման համամատ—որին լանձնւած էր ուսումնասիրել ալս կարևոր խնդիրը մանաւանդ Ռուսաստանի համար, ուր տարածութիւնները միանգամակն առնելի են: Համեմատութիւններ անելով եւրոպական երկաթուղիների հետ, պ. Պերլը իւր զեկուցման մէջ գրի էր առել այն իրողութիւնը՝ որ ուսուական երկաթուղիների վերցրած վճարը, թէ պասածիր ների համար և թէ ապրանքի համար շատ աւելի բարձր է քան Եւրոպական երկաթուղիները:

Պասածիրների գնացքում վերցնում է 1 կիլոմետր տարածութեան համար ոսկի կոպէլ:

	I կարգում	II կարգում	III կարգում
Ռուսաստանում . . .	3,52	2,73	1,34
Աստրիականում <sup>1)</sup> . . .	1,86	1,24	0,62
Դանեմարկական . . .		1,86	1,16
Գերմանիական . . .		1,86	1,24

Երկրորդ կարգի գները համեմատարար երրորդի հետ—շատ են բարձր, իսկ եթէ ի նկատի առնենք որ Ա կարգի տոմսակներից պետական տուրք է վերցնում 25% գնի արժէքից, իսկ III կարգից միմիակն 15%—հասկանալի կը լինի թէ ինչու ճանապարհորդների մեծամասնութիւնը անցնում է Ա կարգից երրորդը: Վիճակագրական թւերը գալիս են հաստատելու ալս կարծիքը:

1890 թ. ճանապարհորդները բաժանում էին ալս կարգով. 100 մարդու ընկույտը էր III կարգում 88,7, II-ում 7,2 և I-ում 1,4:

Համեմատութեան համար գնենք արտեղ 1883 թւականի աղիւսակը, որից կերևաւ որ անհամեմատ թանգութիւնը ստիպել է I և II կարգի ճանապարհորդներին ալդ կառքերից անցնել III կարգը: 1883 թ. պատէսէին բաժանում ճանապարհորդները. 100 մարդու վերակ՝ III-ում—86,1, II-ում—9 և I-ում—2. առել է թէ 8 տարւակ ընթացքում I կարգի պասածիրները պակասել են 30%, II կարգինը 25%: Պետական տուրքը

<sup>1)</sup> Ընթերցողը կը նկատի, որ Աստրիակի պետական երկաթուղիների I, II, III կարգերի գները վերաբերում են իրար իր 3: 2: 1:

Երկաթուղիների տոմսակներից օրէնքի ողջ է ստացել 1881 թւականից։ Աչքի առաջ ունենալով հունգարական սիստեմի այն գոտիաւոր տարիքը (Պօաշնակա տարիք) բարեկաջող արդիւնքները՝ պ. Պերլի սռաջարկութեամբ ալդ սիստեմը զործադրուելու է նաև Ռուսաստանում։ Ալդ սիստեմը հետեւելուն է. վերստի գինը պակասացնում է այնքան շատ որքան որ մեծացնուում է անցնող տարածութիւնը. և ալս սկզբունքի համեմատ կարծ տարածութիւնների ամեն մի վերստը աւելի թանդ է վճարւելու քան երկար տարածութեան ամեն մի վերստը. 600 վերստի համար պ. Պերլը նախագծել է ամեն մի վերստի համար։

I կարգում վերցնել 2,20, երկրորդում 1,55 և երրորդում՝ 0,95. Ալպիանդ եղած գները պակասեցնում է I կարգի համար 26%, II կարգում 31% և III կարգում 22%։

Եթէ ալտոեղ դնելու լինենք նաև մի քանի ուրիշ թմբ երկոպական երկաթուղիների վերաբերեալ աւելի ևս պարզ կը լինի աղաղակող անհամատութիւնը պակասեցնելու Ռուսաստանի երկաթուղավին վճարները պաստիրական տոմսակների համար։

Միջազգալին վճարագրական ժողովի համեմերից երևում է որ անգլիացու միջին եկամուտը հասնում է տարեկան մօս 300 ռուբլու, ֆրանսիացունը մօս 220 ռ., գերմանացունը 180 ռ., ինչ ասել կուզի որ ոսինը շատ և շատ պակաս պէտք է հաշւել, մինչդեռ չին երկաթուղավին տոմսակների գների համաձայն նա շատ աւելի էր պարտաւորւած վճարելու իւր անձի՝ տեղից տեղ փոխադրութեան համար։

Վիճակագրական թմբը՝ պերճօրէն ապացուցանում են ալս կէտը, 1883 թւին մի գերմանացի միջին թւով արած էր երկաթուղով 30 կիլոմետր, ֆրանսիացին 34, աւստրիացին 47, իտալացին 48 և ռուսը 107. Ասել է թէ Ռուսաստանի ճանապարհորդը տոփաւած լինելով աւելի երկար տարածութիւններ անելու, նաև սոտիպւած էր կրկնակի վճարել ամեն մի վերստին։

Եթէ անցնելու լինենք պաստիրների թվն՝ կը տեսնենք որ Ռուսաստանի ճանապարհորդների քանակութիւնը մի ծաղրավի թիւ է ներկացնում համեմատութեամբ Եւրոպայի պաստիրների թվ հետ. 1883 թւին անգլիական երկաթուղիները տեղափոխել են, 734 միլիոն պաստիր, գերմանականները 233 միլիոն, դրա աւստրիականները 47 միլ., ֆրանսիականները 205 միլ., բելգիականները 53 միլ., իտալականները 34 միլ., իսկ ռուսականները միլիար 38 միլիոն. Բնակիչների թվ համեմատ մի բնակչի համառամ է։

Անգլիակում . . . . . 21 պաստիր

Գերմանիակում . . . . . 5,3 " "

Ֆրանսիակում . . . . . 5,4 "

Բեղիալում . . . . .	8,7	ն
Աւարիալում . . . . .	2,2	ն
Խտալիալում . . . . .	1,2	ն
Ռուսաստանում . . . . .	0,4	ն

Ուրիշ խօսքերով ամենն մի անդլիացի տարէնը ճանապարհորդում է 21 անգամ, իսկ ոռու հպատակը հինգ տարում ճանապարհորդում է երկու անգամ. Գալով Անդրկոլիկասին՝ պէտք է նկատած որ III կարգի գները աւելի ես աղաղակող են, այն է վերաբը 2,17 կոպէկ. անգէս որ երրորդ կառքով Բաքուց Բաթում գնալը կը կ'ն ակի թանգ է քան այն կառքով անցնել Ֆրանսիակի մի ծալից գէպի միայն.

\*  
\* \*

Օդոստոս ամսին տեղի ունեցաւ Պետերբուրգում Միջազգակին երկաթուղավն համաժողով—որը ունեցաւ մի քանի նիստեր մասնակցութեամբ զանազան եւլուպական պետութիւնների կողմից ուղարկւած պատգամաւորների. Ի թիւ ալլ զեկուցումների ուշադրութեան արժանի է վշատակելու շէցարական պատգամաւորի, ալ. Գալովերի զեկուցումը, որով նա պաշտպանում է պասաժիր գնացքների սականի պակսացնելը ու վերադարձի տոմսների գործածութեան մէջ մացնելը 1888 թ. ազգակի վերադարձի (գնալ ու գալ) տոմսներից օգտւել են Շելցարիակում ճանապարհորդների ընդհանուր գործարից  $70\%$  (մօտ  $19\frac{1}{3}$  միլ. ճանապարհորդներից  $13\frac{1}{2}$  միլ.), Ապա նա պաշտպանում էր Հունդարիալում՝ Բարոյի նախաձեռնութեամբ մտցրած գոտիաւոր սիստեմը—մի սիստեմ, որը մեծ օգուտներ տևեց երկաթուղիներին և մեծ չարմարութիւններ հասարակութեանը.

Ուստաց պատգամաւոր պ. Պերլ—խօսեց ալլ սիստեմի անդարմարութեան դէմ Ուստաստանում ընդունելու համար բաց պաշտպանեց նոյն սիստեմի սկզբունքը—որով դիցուք, կրկնակի հեռաւորութիւնը, կրկնակի սակագնից պակաս է գնահատում և գնալու տարածութեան չափ աւելի լինելը շատ աւելի արժան է գնահատում քան վորովիկ տարածութիւնը:

Մի ուրիշ կարևոր խնդիր որ համաժողովի ուշադրութիւնն էր գրամը էր երկաթուղավն ծառալողների ապահովացնելու խնդիրը, Հումաժողովը բարուպական պարտաւորութիւն համարեց երկաթուղիների կողմից—ապահովել իրանց ծառալողներին:

\*  
\* \*

Մովկալի միջազգային մարդաբանական համաժողովի զրադմունք-ների աւարտումից<sup>1)</sup> գիտնական պրոֆեսոր Ռուգովի Ֆիրխտելը մնկնեց գէպի Պետերբուրգու ուր ի պատիւ նրա տեղի ունեցան զանազան խնջութեաներ և հացկերութներ թէ բժիշկների կողմօց և թէ քաղաքի կողմից, Ակա վերջինիս տւած նախաճաշիկին—որ տեղի ունեցաւ քաղաքակիի գործիչներից մինի—Ռատիկով-Ռաժուսի ամարանոցում—Ռուգովի Ֆիրխտելը պատասխանելով իւր կենաց բաժակին—ասաց որ ամենից շատ իրան ախորմելի են քաղաքի կողմից իրանարած ընդունելութիւնները և բարեմաղթութիւնները.

Ես ինքս, ասաց նա ի թիւս ալլոց, ծառապել և ծառապում եմ Բերլին քաղաքի ինքնավարութեան գործին և ալլ ծառապութիւնը համանքին—ամենաախորմելին է բոլոր ծառապութիւններից, Ակդամական մարդունան է պետական ծառապողի, չի ընկնում դէս ու դէն ու ոչ էլ քաղաքական զանազան կուսակցութիւնների ազգեցութեան ենթարկուամ:

Ներկայ եղած շատ պրոֆեսորների կենացները խմել լուց իսուով պրոֆ. Ֆիրխտելը նկատեց այն որ ակտարակ Ռուսաստան գալով—նա կամուցաւ իւր չորրակալութիւնը լավանել այն բարեմաղթութիւնների փոխարէն որ իւր անցեալ տարւակ լորելեանի առիթով նա ստացել էր ուսա բժիշկների կողմից:

Ի պատիւ Ռ. Ֆիրխտելի տւած ճաշերի—աչքի է ընկնում վերջին հաւաքական ճաշը օդոսուու 17—նախագահութեամբ լուսաւորութեան մինիստր կոմս Խ. Դ. Գելիանովի Ներկայութեամբ պալատական բժիշկ Հերշի, Կուդրինի, Սուբբոտինի, Ռատիկինի, Ռեմմերտի, բժշկական Զինուրական Ակադեմիակի պրոֆ. Խվանովիկին—աւագադոյն Ֆիրխտելի աշակերտներից և ազն... կենացների ժամանակ արտասանած ճառերում մածանուն գիտնական հիւրը ասաց ի թիւս ալլոց. «Գործունէութեան սկզբի օրերից—ես մօտ եմ բժիշկներին, Նրանք մօտ են սրտիս և թանգ—ինչ ազգութեան էլ որ պատկանէին, ինձ մօտ ուսել են շատ ուսներ, բայց իմ գիտական հետազոտութիւններիս համար—ամենաընդարձակ հիւրասիրութիւն և նիւթի ահազին քանակութիւն գտել են և գտնում են Ռուսաստանում նաև գերմանացիք, Ակա փոխադարձ փոխանակութիւնը ներկայում ակնքան արագ է կատարուամ լանուն լաջողութեան և գիտութեան բարգաւաճման—որ գումար անելիս մարդ չի իմանում թէ ով ում աւելին պարտ մնաց, Ես ուրախ եմ ալլ բանին, Ռուս երիտասարդութիւնը զալիս էր և գալիս է մող մօտ գիտութիւն որոնելու և մնեք տալիս էինք մեր կարողութեան չափ: Մեզ բերում էին նոքա թարմ, կենդանի հոգիներ, սրտալի ու անկեղծ ձգտումն ու հակումն զէպի. գիտութիւն և ալլ

<sup>1)</sup> Տես «Մուրճ»-ի սուն համարում «Մարդաբան» միջազգ. համաժողովու-

թարմութիւնը ու անկերծութիւնը մեզ ևս թարմ էին դարձնում, ևս երջանիկ եմ որ կարաղացաւ կենսաբանութիւնը (օնօլոգիք) հաստատ հիմքերի վերա դնելու կենսաբանութիւնը—իբրև հիմք բժշկականութեան, և ևս լանչուն ուրախ եմ անսնելով կանգուն շարքեր աշակերտներիս,

Ամենից շատ ինձ ուրախացնում է նրանց մէջ նրանց սրտալի և մանաւանդ անկողմնապահ վերաբերունքը դէպի գիտութիւնը, կենաց ևմ առաջարկում ուսու բժշկական գիտութեան ծաղկմանը, նրա սպացուցած և վկասած առաջադիմութեանը և ուսու ու գերմանական գիտութիւնների դաշինքինու.

Յարդելի պրոֆեսորը մի ուրիշ բաժակի առիթով իւր կարծիքները լարմանց երիտասարդութեան մասին,

Այրիտասարդ սերունդը ըարձր է պահում գիտութեան դրոշակը և մանաւանդ բժշկական գիտութեանը ու մասնաւորապէս—բժշկինըու:

Ճաշկերութը անցաւ շատ ուրախ, վերջում խմբով երգեց ուսանողական «Gaudemus»-ը, նրգեցաղութեանը կառավարում էր Հանս Ֆիրխումը—որը նունպէս պրոֆեսոր է:



Քաղաքալին ինքնավարութեան մասին հրատարակեցին նոր օրէնքներու Համամատութեամբ հնի հետ—նոր օրէնքը քաշցնում է ձանաւորների թիւը սահմանափակելով փողաւրիների շրջանով, խոչըրացնում գուքի (խոյածտենական) ցինը<sup>1)</sup>, քաղաքաղլիսի, սրա օդնականի, ուսպրավակի անդամների ծառալութիւնը համարում է անցրունական, ուստի առքա ենթարկում են ներքին գործերի մինիստրութեան խորհրդի դատի վճիռներին, որոնք վաւերացրած պիտի լինին մինիստրի վճռութ. նուն վիշեալ քաղաքալին ծառալուները ենթարկում են նկատողութիւնների, լանդիմանութիւնների, կամ զրկում պաշտօններից քաղաքալին գործերի ատեանով (որութեան ու գործառութեան մասին պատուի առաջարկութիւնների երկրորդ անդամ չը ժողովելուց հետո գումարի ներթական հարցերը թողնում են նահանգապահութիւնների, կամ զրկում պաշտօններից քաղաքալին գործերի ատեարին, Մինիստրին ժամանակ նահանգապետների իրաւունք է որում վերաստուլութեան ենթարկել ուսպաւաները և սրանց ստորադրեալ օրգանները՝ արգելելով գումարի անպահի վճիռների գործադրութիւնը, որոնք կամ

<sup>1)</sup> Պեհած=ըրու կարողութիւն կամ նկամուաի պալման:

տէրութեան օրէնքների հակառակ են վաւերացրել և կամ, ըստ նտհանգապետի, աղդ զի՞ւռները ընդդէմ են տէրունական ընդհանուր շահերին և պիտուքներին և ասկներն կերպով ընդդէմ են տեղական ազգաբնակութեան շահերին:

Պարզ է որ ցանկութիւն է եղել ամրացնելո տեղական իշխանութիւնները և նորն իսկ կապել և մտցնել զեմստւոների և քաղաքավն գործադրող օրգանները ընդհանուր վարչութեան շրջանի հետո:

Զի կարելի չը համարձակել այս առիթով ուսւ մամուլի մի մասի արտակարութած մտքերի հետո:

Սա իրաւացի կերպով նկատում է, որ այդ միացումը չի սունդուռմ նոր օրէնքով, քանի որ ամրացրած է միմիակն կախումը բարձր շրջաններից, առանց զօրեղացնելու քաղաքավն ինքնալիքութեան այն անմիջական միջոցները, որոնցով սուբա հնարաւորութիւն ունենալին անկախ կերպով ժողովելու իրանց սուրքերը:

Նոր ձեակերպած տուգանքները վիշեցնում են դասատնալին պատիճնները և գրեթէ աւելորդ են թէկուզ այն պատճառով, որ բացակաէ եղած ձախաւորը կարող է մի անօգոստակար ձախաւոր լինել հերթական ինդիրներում:

Անտեղի պէտք է համարել նաև նահանգապետների հսկողութիւնը հասարակութեան ձեռքով ընտրած անձնաւորութիւնների վրաէ—մեղը հասարակութեանը պիտի լինի՝ եթէ նա չիմացաւ լարմար և արժանաւոր մարդիկ ընտրել և վերջապէս տեղական հասարակութիւններին աւելի քաջ լալանի պիտի լինեն իրանց շահերը, քան դրան մարդկանց Դժւար թէ արգելքը ձախաւորների թւի մէջ եղած լինի՝ որ մի քանի հասարակութիւնների քաղաքավն գործերը այն լաջող ընթացքը ստացած լինէին. փոխանակ առհասարակ քչացնելու նրանց թիւը՝ պէտք էր նոր ուժեր մտցնել նրանց մէջ և ոչ թէ սահմանափակել դրամատիրական ներկապացուցիչներով, իրաւ է, փողատերները՝ վաճառականները և կալւածատէրներն են գլխաւորապէս քաղաքավն սուրքերի մեծ մասի վճարողները, բայց դա նշան և ապացուց չէ որ և քաղաքավն վիճակը սոցա կամքին և կամալականութեան պիտի լանձնաւծ լինի. Անհրաժեշտ էր քչացնել դրամական ցենզը լոգուստ կրթական ցենզի:

Նոր օրէնքի համաձան ոչ քրիստոնեակ ձախաւորների թիւը չը պիտի լինի ամելի քան 1/, ձախաւորների ընդհանուր թիւից նթէ այս կէտը այն հանդամանքի դէմ է որ մի քանի ազգութիւններ (հրէաներ) մի լալոնի քաղաքում առջլի պակաս թւով լինելով ուրիշ քրիստոնեակ ազգաբնակութեան թիւց երբեմն կարողանում են իրանց ձեռքը դցել քաղաքավն գործի զեկալիքութիւնը,—ապա անիրաւացի է այն դէպերի համար՝ երբ քաղաքի աղդաբնակութիւնը մեծ մասամբ կաղմաւծ է հէնց ոչ քրիստոնեաներից:

\*  
\* \*

Նոր լուս տեսած ռուսերէն ինքնուրովն կամ թարգմանութեամբ զրգերից արձանագրենք նշանաւորները:

1) Հերբերտ Սպինսերի Փիլաստիալութիւնը կարճառօտ, Հովարդ Կոլլինսի, հրատարակութիւն Ֆ. Պալենիովի, Գինը 2 ռուբլի:

2) Ուշագրութեան հոգեբանութիւնը Շ. Ռիթո, հրատ. Պալենիովի, գինն է 40 կոտէկ:

3) Նշանաւոր մարդկանց կենսագրութիւնը Հրատ. Պալենիովի:

Պր. Պալենիովը մինչև օրս հրատարակած կը լինի 90—100 կենսագրութիւններ անշանաւոր մարդկանցոց, որոնց թւումն են թէ զիանականներ, թէ երաժիշտներ, թէ բանաստեղծներ, թէ հրապարակախօսներ և այլն և այլն. Ամեն մի տետրակը արժէ 25 կոտէկ:

4) Ընդհանուր պատմութիւն, Վերերի թարգմանութիւն Նեվեղումսկու՝ հասոր ԽՎ. մաս առաջին, գինը 5 ռուբլի:

5) Գոնաւոր լուսանկարչութիւն—գինը 40 կոտէկ. Այս գրքովկը խօսում է պրոֆեսոր Վապամանի արած գիտի մասին—մի գիտ որը մած ապագայ է խոստանում, քանի որ հնարաւորութիւն է տալիս լուսանկարչական ձևով ընդօրինակել սպեկտրի բոլոր գոները:

6) Զեռնարկ կազմելու և խնամելու գիւղական ուսումնարանների կից աղբիները՝ Վ. Ալեքսանդրովի, գինը 30 կոտէկ:

7) Մեղուն և փեթակը—թարգմանութիւն Լանգստրուտից, գինը 2 ռուբլի 50 կոտէկ:

8) Очерки Гоголевского периода русской литературы. գինը 2 ռ. Այս վերնագրով նոր լուս տեսած գիրքը պարունակում է Ալեքսեևնիկով ուսուամսագրի մէջ 1855—1856 թ. տպւած Ն. Գ. Զերնը շեռ է հաջակաւոր լուսականիրը՝ ապրիլները են խորին լարգանքին և համակրութեան դէպի ան ինչ որ աղջիւ, ճշմարիտ և օգտակար էր ուսուագրականութեան և քննադատութեան մէջու:

9) Փիլսուփակութեան ոլ ատմութիւնը Զ. Լիւլիսի, անդիբէնիցից թարգմանութիւն, գինը 3 ռուբլի:

10) Բենեդիկտ Սպինսուզի էտիկա'ն. թարգմանութիւն լատիներէնից խմբագրութեամբ պրոֆ. Մողեստովի, գինն է 2 ռուբլի:

11) Հանճար և խելագարութիւն Լոբրոգովի. գինը 1 ռ. թարգմ. տիկ. Տեսիւշինովսկի:

12) Պետերբուրգի վիճակագրութիւնը 15 դեկտեմբերի, 1890 թ. կատարւած—որից ի թիւ ալլոց երեսում է որ ազդ օրը ուսուամսագրադագը ունէր 954.400 բնակիչ, որոնցից 512,718 այս մարդ և 441,682 կինարմատ.

13) Վ. որոնեժ ճ նահանգի էիշատակատերը առ 1892թ.  
հրատարակ. Վ.որ. նահանգ. վիճակագր. լանձնաժողովի. Ամբողջ նահանգի  
տուրքերի մուտք հաշում է օ միլ. ռ., ապառիկ է մնացել ց1891թ.  
 $1\frac{1}{3}$  միլ. ռ., իսկ Նիժնիվիցի գաւառի ապառիկը համասր է նրա տարե-  
կան վճարի 97%.

14) Կուբանի ժողովածուն - որից երմումէ որ բնակիչների թիւը  
համում էր 1890թ. =  $1\frac{1}{2}$  միլ. հոգու Ծնունդները եղել են շատ առաս-  
69 հազարի ծնունդ, մահացութիւնը 43 հազար:

15) Գերմանա-ռուսական - Տեխնիկական բառարան կորերլիտի, տես-  
րակ Լ. գինը 50 կ., բոլոր տեսրակների թիւը լինելու է 50. Մասնակ-  
ցում են կազմելում մասնագէտներ:

16) Բերանմէի ռուսանաւորների լիակատար թարգմանութիւնը Ցիոր-  
ժեսկի ամուսինների մասնակցութեամբ. հրատարակւում է տեսրակներով  
թիֆլիսում Ցետրակի գինը 25 կոտեկ: